

ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐԸ

Ֆելիետոնը Լեռ Կամսարի նախասիրած ժանրն է, ստեղծագործական խառնվածքի ու տարերքի դրսևորման գլխավոր միջոցը:

Կենդանության օրոք երգիծաբանը հրատարակել է «Անվավեր մեռելներ» (1924), «Ազգային այբբենարան» (1926), «Վրիպած արցունքներ» (1934), «Գրաբար մարդիկ» (1959), «Մարդը տանու շորերով» (1965) գրքերը:

Հետմահու հրատարակվել են «Կարմիր օրեր» (2000), «Սաստիկ կոմունիստներ» (2002), 2008-ին՝ «Խաղը և խայտառակ աշխարհ», 2009-ին՝ «Աղցիալիզմի Սահարան» քաղաքական ֆելիետոնների ժողովածուները, որոնցում ամփոփված է մեծամուկ երգիծաբանի քաղաքական սատիրան՝ ընդգրկելով նաև մեծաքանակ անտիպ գործեր: Հրատարակվել են նաև Կամսարի օրագրությունները, որոնք իրենց անցած դժվար ճանապարհի պատճառով ստացել են «Մահապուրծ օրագիր» խորագիրը(1):

Հայ գրականագիտական միտքը, ցավոք, քիչ է անդրադարձել մեծ երգիծաբանի ստեղծագործությանը: Նրա ժառանգությունը դեռևս չի արժանացել ամբողջական գնահատման. մինչև վերջերս հայտնի էին միայն որոշ բնութագրական արտահայտություններ ու փոքրիկ հոդվածներ: Առաջին ընդգրկվում ու հանգամանալից ուսումնասիրությունը Սամվել Մուրադյանի «Գրական հանգրվաններ» Բ հատորում մեկի՝ «Երգիծանքի անկասելի ուժը» բաժնի «Պարոնյանի և Օտյանի ազգակից Լեռ Կամսարը» ուսումնասիրությունն է, որը ամբողջական պատկերացում է տալիս Կամսարի գրական ժառանգության, մեծ նախորդների գրական ազգակցության մասին(2):

Լեռ Կամսարի երգիծական ֆելիետոնները երկակի զգացում են առաջացնում. ամենից առաջ՝ հիացմունք են պատճառում հեղինակի առողջ ու բարձր երգիծանքը, հզոր տաղանդի ուժն ու նրբությունը. միաժամանակ խորին ցավ են զգում, որ տաղանդավոր երգիծաբանը 20 տարի շարունակ դուրս է մնացել մեր գրական կենդանի կյանքից: Լեռ Կամսարը հայ դասական երգիծաբանության արժանավոր ժառանգորդն է, Հ. Պարոնյանի և Ե. Օտյանի գրական ազգակիցն ու նրանց ավանդների շարունակողը(2,126):

Թեև հարթ ու խաղաղ չի անցել Կամսարի ստեղծագործական կյանքը, այնուամենայնիվ նրա երգիծական ֆելիետոնները ցույց են տալիս, թե որքան

արժեքավոր է երգիծաբանի գրական վաստակը և ստեղծագործության գրական-պատմական նշանակությունը:

Ապրելով սոցիալիզմի երկրում՝ նա երբեք չփոխվեց, չքոնեց կուսակցական որևէ առաջնորդի կամ պաշտոնյայի: Երգիծաբան արվեստագետը ցուցաբերեց քաղաքական մեծ կամք և չլոնե՝ տեսանելի ախտերը առաջինը նկատելով:

Երգիծաբանի իր կոչմանն ու ստեղծագործական սկզբունքներին հավատարիմ՝ Կամսարը պարզապես հրատապ է համարել հասարակական երևույթների պատկերումը, այն թերությունների վերհանումը, որից կշահեր մարդկությունը: Իսկ ծրագրի գունապակին դիմելը վկայում է նրա քարծր ճաշակի, իրական երևույթների խոցելի կողմերը անվերապ հիտարկողի մասին, որին հաջողվում է քննարկվող երևույթին տալ քաղաքական ճշգրիտ պատասխան:

1915-23թթ. նա ականատես եղավ հայության անլուր ողբերգությանը, Մեծ Եղեռնը իրագործող թուրքերի դեմ մեր ժողովրդի մղած պայքարի հերոսական դրվագներին, որոնց անմիջական մասնակիցն էր ինքը:

Քաղաքական շրջադարձը մեծ լարում առաջացրեց երգիծաբանի հոգում՝ պարարտ հող ստեղծելով քաղաքական տեսողության սրման ու երգիծական «ապտակների» արարման համար: Կամսարի ամենատես աչքից չէր վրիպում որևէ բնագավառի թերություն, սկսած պետությունների ներքին ու արտաքին քաղաքականությունից մինչև որևէ պետական նշանավոր գործչի բնավորության այս կամ այն արատը:

«Սովետական Միությունը մի հսկայական գոմ է, ուր դատարկ մսուրների առաջ կապված են երկու հարյուր միլիոն երկրտանի անասուն, որոնք մի ժամանակ մարդ էին կոչվում: Նրանց ձեռները պինդ կապված է հետևը, ո՛չ կարող են իրենց բեղերը սրել, ո՛չ մորուքը հարդարել: Վիզը քորելիս մսուրին կամ պատին են քսում: Իրենց մարմնին թառած ճանճերը անկարող են քշել, որովհետև անողորմ կերպով կտրված է նրանց պոչը...»(3): Այս արատներն էին շատ հաճախ տխրեցնում երգիծաբանին.«...մտքերս, մտքերս,, չեն կարող մեջս պահել, և մի անցք են փնտրում արտահայտելու՝ չեն գտնում:

Ու մտքերս ածխանում են գանգումս, առանց տաքացնելու մարդկանց, որոնք կծկված դողում են սոցիալիզմի ... քամուց...»(3,211):

1926թ. տպագրվում է Կամսարի «Ազգային այբբենարան» ժողովածուն: Գիրքը լույս տեսավ ժամանակի նշանավոր քննադատ Արտաշես Կարինյանի խիստ բնութագրական առաջաբանով, ուր ընդգրկված ֆելիետոնների ու երգիծական պատկերների մասին մասնավորապես ասված է. «Այս ժողովածուի

մեջ նրանք արտացոլված են անփոփոխ, առանց որևէ ուղղումների կամ նոր հավելումների:

Եվ դա շատ լավ է:

...և ա ծիծաղում է, ծիծաղում- և միայն այդքան:

Բայց հենց իր դառն ծիծաղով նա ամենասուր քննադատության է ենթարկում անցյալի տիրակալներին: Եվ միաժամանակ, հակառակ գուցե իր կամեցողության, արտահայտում է հայ ժողովրդի աշխատավորական լավագույն տարրերի բացասական վերաբերմունքը դեպի հայկական Տարտարեմների գործը»(4):

Հեղինակային օրագրություններն ու կենսագրական մանրամասները մեզ հուշում են, որ երգիծաբանը եղել է նյութական դժվարությունների ու բարոյական ծանր ճնշումների տակ: Իհարկե, հասարակության մեջ նկատվել են պետական կուսակցական առանձին գործիչներ, որոնք մեծ համակրանք ու որոշակի աջակցություն են ցուցաբերել Կամսարին, բայց այդ ցանկալի երևույթը, ցավոք, չի վերածվել օրինաչափության: 1920-ականներին այդպիսի բացառություն էր Սարգիս Լուկաշինը, որին էլ նվիրված է Կամսարի «Ազգային այբբենարան» գիրքը՝ «Ընկեր Լուկաշինին՝ իր անկեղծ բարեկամին՝ կնվիրե հեղինակը» ընծայականով: Ի նշան մեծ հարգանքի: Գրական միտքը զնահատող այս մտավորական գործիչը Կամսարի կյանքում այն սակավաթիվ մարդկանցից էր, որի մտերմությունը բարեկամություն էր ներշնչում երգիծաբանին. «Իմ ողջ կյանքում ես մի մարդ միայն սիրեցի՝ և այդ մարդը Լուկաշինն էր:

Դա մարդ չէր, այլ ոգի: Եթե նա քառասուն տարի մնար իշխանության զլուխ ես հիմա քառասուն հատոր գիրք կունենայի տպված: Կրնկակոխ ինձ է հետևում և չի թողնում, որ մի րոպե գրիչս վայր դնեյի հանգստանալու համար...

...Ա-խ, ա-խ... յարաբ էլ այդպիսի մարդ պիտի պատահի՞ ինձ կյանքում, թե ոչ: Գերեզմանի տեղն էլ չգիտեմ, որ ծունկի իջած վրան խունկ ծխեմ...»(5):

1927թ. նոյեմբերի 12-ին ուղղված մեկ այլ նամակում(6) Կամսարն իր մեկենասին համեմատում է Հիսուսի առակի Բարի Սամարացու հետ:

Այս ժողովածուն նաև մի փորձ էր, սոցիալական ծանր դրությունից դուրս գալու հեղինակի ջանքերից մեկը: Այս են վկայում Ավետիք Իսահակյանին ուղղված նրա խոսքերը.(7) «... 304-ի մոտ 200 օրինակ իմ «Ազգային այբբենարանից» կա. ծախվու՞մ է արդյոք...»:

Այս հանգամանքներն են նաև պայմանավորում քաղաքական ու սոցիալական երգիծանքի համադրումը գրողի միևնույն ստեղծագործության մեջ: Պետք է ասել, որ հենց այս ձևն է հնարավորություն տալիս պատկերը դարձնել երգիծական, այլապես հազիվ թե այս ամենը ծիծաղելի լիներ:

Եվ, ընդհանրապես, պետական վարչակարգի ցուցաբերած ուժ ուշադրությունը, ուժ անտարբերությունը երբեք էլ որոշիչ ազդեցություն չունեցան այս հեղինակի գրչի վրա: Որտեղ էլ հայտնվեք, ինչով էլ զբաղվեք, նա մշտապես արդարության կողմնակիցն էր, այդ իսկ պատճառով մշտապես գտնվում էր մաքառման, պայքարի մեջ: Անգամ ճակատագրի օրհասական պահերին նա իրեն երբեք, (գոնե ստիպված) «ողջամիտ» չպահեց: Ողջ կյանքի ընթացքում նա ամենասուր կերպով արծագանքում էր հասարակական կեղծիքին՝ ոչ մի կերպ չհանդուրժելով շարունակ իրեն հանդիպող անկարգությունը:

Լեռ Կամսարի կյանքը՝ չապրած տարիները, իր գրականությունը, օրագրությունները, բացառիկ խիզախում էր իր ապրած ժամանակի առաջ և վկայություն էր այն բանի, որ մարդու բարձրագույն իդեալը՝ ազատութունը, իբրև բացառիկ հոգեվիճակ յուրաքանչյուրը կրում է իր մեջ: Այդ դրսևորմանը չէին կարող արգելք լինել ո՛չ պատմական իրավիճակը, ո՛չ ժամանակաշրջանը, ո՛չ հասարակարգը, ոչ էլ պատմական վարչակարգը: Բայց սա անհատների պարագայում, նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում իրենց ժամանակի և սեփական խղճի հանդեպ: Ասվածի լավագույն վկայությունը Կամսարի քաղաքական ֆելիետոններն են:

Իբրև ժանրային օրինաչափություն՝ այս ֆելիետոնները հրապարակախոսություն են այնքանով, որքանով իրենց բովանդակությունը ստանում են օրվա ամնիջական խնդիրներից՝ ընդգրկելով կոնկրետ փաստեր, հանդես բերելով կոնկրետ անձնավորություններ: Եվ գեղարվեստական ստեղծագործություն են այնքանով, որքանով օգտվում են արծակի ստեղծագործական միջոցներից, գեղարվեստորեն են ներկայացնում մարդկանց, առարկաներն ու երևույթները՝ հասնելով որոշ տիպականացման: Կարելի է ասել, որ Կամսարի ֆելիետոններին բնորոշ է իրականության գեղարվեստական ու հրապարակախոսական միաժամանակյա ուսումնասիրությունը, ուր, իբրև ընդհանուր օրինաչափություն, գրողական երևակայությունն ու զգացմունքը հաջորդում են խելքին:

Խորհրդային իրականության առաջադրած պայմանները ստիպում են Կամսարին գիտակցաբար բաց թողնել տասնյակ ուշագրավ թեմաներ՝ հաշվի առնելով, հատկապես, քաղաքական թեմայի ազդեցությունն ու կարևորությունը ընթերցողների շրջանում: Ճշմարտությունը վերարտադրելու մեծ ցանկությունից դրդված՝ երգիծաբանը ջանում է ընտրել այնպիսի թեմաներ, որոնք կենսական են և համահունչ առօրյա խնդիրներին և որոնց արծարծումը նպատակ ունի հասնել հասարակական ախտերի ոչնչացմանը:

Թեև Կամսարը չի խոսում պատմական որոշակի վայրի ու պատմականորեն կոնկրետ քվերի մասին, սակայն պատմությանը քիչ թե շատ ծանոթ,

քիչ քե շատ տեղյակ անձնավորության համար պարզ է , որ Կամսարը խոսում է 1914-15թթ. և ապա հետագա տարիների, հայ-թուրքական և այլ հարաբերությունների, հայ քաղաքական կուսակցությունների գործունեության և հատկապես խորհրդային հասարակարգի շիկացումների շուրջ:

20-րդ դարաշրջանում հայ ազգը նման էր մի որբի, որ համեստորեն սպասում էր իր ճակատագիրը տնօրինողների թելադրանքին. « Սովետական կարգերում ապրելու համար ո'չ խելք է պետք , ո'չ դատողություն, իզուր բեռ ես անելու քեզ: Այնտեղ մի մարդ մտածում է, մյուսները կրկնում են նրա մտքերը: Առավոտյան վեր կենալիս չես մտածի, թե այսօր ինչ պիտի ուտեմ: Կերթաս պետական խանութի առջև կկանգնես, ինչ տան, այն էլ կուտես... երևակայիր՝ այնտեղ մարդու մեջ երբեք մեռնելու ցանկություն չի առաջանում, որովհետև այնտեղ մարդիկ համարյա... մեռած են...»(3,89) :

Կամսարը ստիպված եղավ ստանձնել դարի տարեգրի պարտավորությունն ու լուռ արձանագրել իրականությունը, մեկնել երևույթներ, որոնք հետագայում ակնհայտ ճշմարտություն դարձան նոր սերնդի համար. «... Դեպքերը կսկսին ահավոր դառնալ: Չարձանագրել դեպքերը, կնշանակի անելին առջև դնել այն պատմագրին, որ ապագային պիտի ցանկա մեր օրերու պատմությունը գրել: Ուստի այս օրվն ձեռք կառնիմ գրիչը գրելու օրը օրին պատահածը, հաճախ պատահեցնելու նաև չպատահածը»(8): Անշուշտ, նման պայմաններում դժվարությամբ են պահպանվում գրողի գեղագիտական նախասիրություններն ու սկզբունքները: Այս մտավախությունը ուներ նաև ինքը՝ Կամսարը. «Իմ գրական գործունեության ողջ ընթացքում ես աչ ձեռքով գրել եմ, ծախով պայքարել կյանքի համար: Իսկ այն դեպքում, երբ կարիքը վիզս փաթաթած օղակը ափելի է սեղմել, ես գրիչս տվել եմ ծախ ձեռքս և աջով պայքարել ու երազել այն ժամանակի մասին, երբ ինձ էլ կհաջողվի երկու ձեռքերով գրասեղանիս առաջ նստել՝ մեկով թուրքը բռնել, որ չսահի, մյուսով գրել ազատ...»(9) :

Կամսարը քաջ գիտակցում էր, որ բավական չէ միայն վերհանել երևույթի բացասական կողմը, անհրաժեշտ է այն մատուցել այնպես, որ շարժի ընթերցողի հետաքրքրությունը: Սա ամենակին չի նշանակում, որ երգիծով կերպարը կարելի է հասցնել անբնական նկարագարոման: Գրողի պարտականությունը դատավորից շատ անաչառ լինելն է: Վերջինիս կարևորությունը ենթադրում է մի շատ կարևոր հանգամանք. փաստերն ափելորդ գունագարդումից գերծ պահելը: Գեղարվեստի ու իրականության սահմանները չափավորելով՝ Կամսարը փորձեց հավատարիմ մնալ իրականության հավաստիությանն ու ստեղծել գեղարվեստական ստեղծագործության եզակի նմուշներ:

Բայց սուր չափազանցումները շատ հաճախ գերազանցում են իրականության հավաստիությունն ու վերածվում գրոտեսկի: Արատը տեսնելով ու գնահատելով է հնարավոր վերջ տալ անկարգությանը: Սա, բնականաբար, չի նշանակում, որ ֆելիետոնը պիտի սահմանափակվի միայն իրական փաստերի արձանագրությամբ: Այլապես այն կարող է կորցնել իր ժանրային առանձնահատկությունը: Թեև երգիծական այս միջոցին դիմելը Կամսարի երկերում վերածվում է երգիծական օրինաչափության, բայց հարկ է նշել, որ հեղինակին բնորոշը նախևառաջ մտքի հստակությունն է ու խոսքի կուռ տրամաբանությունը: Բանականությունը, ինչպես մի անխախտ հոգեվիճակը մշտապես առաջնորդում էր երգիծաբանին:

Կամսարի ֆելիետոններում երգիծանքը աչքի է ընկնում նաև որոշակի միակողմանիությամբ: Վերջինս, սակայն, հղի է անխուսափելի թերությամբ. ասելիքը տարբեր ֆելիետոններում շարունակ ներկայացնելը պատճառ է դառնում հեղինակային կրկնությունների: Նման հաճախականությունը թուլացնում է երգիծանքն ու շարադրանքի դիմամիկան: Բայց մերթ ընդ մերթ աչքի ընկնող այս զանցառությունները, բարեբախտաբար, որակ չեն կազմում:

Կամսարի ֆելիետոններն իրականում կոնկրետ հասցե ունեցող երկեր են, որոնք ոչ միայն ուղղված են տվյալ արատը կրող հասցեատերերին, այլ բացահայտ կերպով անվանում ու մատնացույց են անում վերջինիս գործունեությունը:

Ցասունի ու հիասթափության զգացումները երգիծաբանը վերարտադրեց իր ստեղծագործություններում, որոնք ստեղծվեցին իրականության հետ գրողի շարունակական բախման արդյունքում՝ նախատիպ ունենալով իրական փաստերը: Կամսարը վստահ էր, որ 1910-20-ական թվականներին ստեղծված ամառողջ մթնոլորտն ու իմպերիալիստական պատերազմները հակաժողովրդական են, իսկ հետևանքները՝ անդառնալի: Սուտն ու կեղծիքը ատող երգիծաբանը, անշուշտ, չէր կարող անտարբեր անցնել այդ իրողության կողքով: Դիմելով քաղաքական ֆելիետոնների ժանրին՝ երգիծաբանը ազգային ախտերին զուգահեռ քննադատում է իմպերիալախստական պետություններին՝ իբրև մարդասիրության ուղղակի թշնամիների:

Հայ գրականագիտական միտքը առ այսօր հիանում է աշխարհի գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Չինաստանի ու Ռուսաստանի, հարևան երկրների և Ազգերի լիգայի հակահայ խարդավանքները պատկերող լեռնամապյան քննադատությամբ:

«Առանձնակի սրված էր Լեռ Կամսարի քաղաքական տեսողությունը՝ գրեթե Պարոնյանի և Օտյանի չափ: Գենց նա էր, որ կարողանում էր անկաշ-

կանդ խոսել հայրենագուրկ ու տառապյալ հայության անունից, անկարելի ժամանակներում խիզախորեն պաշտպանել նրա ողորմահարկած իրավունքները» (2,92):

Նրա քաղաքական ֆելիետոնները վերարտադրում են 1910-20 -ական թվականներին միջազգային ու ներքին իրադրության կենդանի պատկերը: Եվ միայն մեծ երգիծաբանին բնորոշ հմտությամբ Կամսարը այդ ամենը իրականացնում է զեղարվեստորեն, պատմական փաստերն ու եղելությունները նրա ֆելիետոններում արտահայտվում են այլաբանորեն, իսկ կերպարները ձևավորվում և հյուսվում են բնական երակներից, իրական կյանքի բազմաթիվ լիցքերից ու կենսական հարուստ տպավորություններից:

Իր ժողովրդի ու հայրենիքի մասին արտահայտվելիս Լեռ Կամսարը չի թաքցրել ներքին համակրանքը շարունակ հարստահարվող ազգի նկատմամբ «...Այսքան խոշոր աղետը մեր պզտիկ դուռնեն ինտո՞ր ներս մտավ»(8,14)՝ Կամսարը բացահայտում է ազգային թուլության հիմնական պատճառները: Եվ այս ամենը անում է աներևակայելի հմտությամբ:

Ավելին, զեղարվեստական պայմանականության տարբեր ձևերի, երգիծանքի ամենատարբեր միջոցների կիրառումով նա հասնում է արտակարգ պատկերավորության՝ երգիծական խոսքը դարձնելով չափազանց դիպուկ ու նպատակասլաց:

Քաղաքական ֆելիետոններում երգիծաբանը դուրս է բերում մթության մեջ խարխափող, դարի ախտերով տառապող խորհրդահայ մարդուն՝ հաշմանդամ ուղեղով, անպետք զգայարաններով. «Մենք, սակայն, որ ընդամենը երեսունհինգ տարի է, ինչ ապրում ենք սովետական կարգերում, այսօր կորցրել ենք մեր մարդկային կերպարանքը և ոչ մի հետք չենք թողել մարդու կերպարանքն ուսումնասիրողների համար:

Սովետական քաղաքացին երկու երես ունի, մեկով ժպտում է պետության երեսին, քծնում, շողոքորթում, լիզում, որպեսզի օրվա հացը վաստակի, մյուսով իր տանը, գաղտնի, չորս կողմը նայելով, վախվխելով ու գերագույն զգուշություն գործ դնելով՝ սկսում է անիծել, հայիոյել, նզովել, քթել, ատամները կրճտացնել, սպառնալ ազատությունից հետո բնաջնջել իր բռնակալներին և մասամբ նորեն...

Նախկին մարդու նշույն անգամ չի մնացել սովետական մարդու մեջ: Նա, ճիշտ է, ունի հինգ զգայարան, բայց դրանք երևութական են, նա դրանցով ոչ տեսնում է, ոչ լսում, ոչ հոտոտում, ոչ ճաշակում, ոչ էլ շոշափում... առանց կառավարության թուլտվության »(3,190):

Անշուշտ, ցավով ու քաղցր ժպիտով է Կամսարը հետևում ի՞ր Հայաստանին, ծիծաղում նրա մաքուր հայացքների վրա, բացահայտում անսակարկ ճշմարտությունը՝ հայության «մեծ» երազների ու «փոքր» բախտի անհամատեղելիությունը :

Քաղաքական ֆելիետոնների ստեղծմամբ Լեո Կամսարը հասավ խոր ընդհանրացումների: Անտեսելով տառապանքն ու իշխանությունների կողմից շարունակ հալածվելով՝ նա հավատարիմ մնաց ճշմարիտ մտավորականի իր կոչումին:

Ազատությունն է այն միակ երազը, որ դեռ կանգուն է պահում հային և օգնում ապրել. «Ազատություն... երբեք կյանքիդ մեջ այնքան անծկավ չես փնտրված, ինչպես այսօր, քանզի բռնությունը այնքան ծանր չի եղել՝ ինչպես այսօր: /«Հուզված եմ...»/(8,67):

Ծանոթագրություններ

1. Իր այդ գործը հեղինակն անվանել է «Սովետական քաղաքացու օրագիրը». նոր խորագիրը տրվել է՝ հաշվի առնելով ծեռագրի բարդ ու արկածային ճանապարհը:
2. Ս. Մուրադյան, Գրական հանգրվաններ, գ. Բ, ե., 2007, «Երգծանքի անկասելի ուժը»
3. Լեո Կամսար, Կարմիր օրեր, Եր., Նաիրի, 2000, էջ 25
4. Լեո Կամսարը, Ազգային այբբենարան, Եր., Պետ. հրատ., 1926, էջ 5
5. Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտկոմի Ա քարտուղար ընկեր Չարոբյանին ուղղված պատասխան դիմումից մեկը. 1961, հունվար 15
6. Նամակի ծեռագիրը 1980-ից պահվում է Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում
7. Նամակը պահպանվում է Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում
8. Լեո Կամսար, Մահապուրծ օրագիր, Եր., 2008, Լուսաբաց հրատ., էջ 14
9. Գրական թերթ, 2007, մարտի 23 # 9, էջ 3